



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ

ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Ի ԶՈՒԻՑԵՐԻԱՅ

34

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

33 3400

ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅԿ. ԸՆԹԵՐՑԱՏԱՆ ՄԷՋ

22 Փետր . 1903 ին .

Աշխարհագրութիւնը ամենեւն զաւուսումն է նկատարարութիւնն արեւոյնցնէր, դասողութիւնը հասունցնէր, հորիզոնները քանաչոր, խորհրդածութիւններ անշնչելու եւ հայրենասիրութիւնը արծարծելու համար :
Բ. ՅՈՆՍԷՆ



Գ Ա Հ Ի Ր Է

ՏՊԱԳՐ. Ե. ԹՈՐՈՍԵԱՆԻ

1903



ՎԱՂԱՄԵՆՈՒԿ ԲՐՈՋՍ

ՀԱՆԳ • ՏԻԿԻՆ ՍՐԻՊՈՒՀԻ Ս • ԶԱՐԴԱՐԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կը Առ իրեւմ հաշերեկի ա յս դո յզն Ասխախա յր ի ֆ ա

Ի ՆԵԱՆ

ԱՆՇԷՋ ՍԻՐՈՅ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՆՇԱՆ ԿՈՐԿՈՑԵԱՆ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ

ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ի ԶՈՒԻՅԵՐԻԱՅ

Տիկիննե՛ր եւ Պարոննե՛ր ,

Նիւթիս սկսելէ առաջ երախտագիտութեան հարկ մ'ունիմ մատուցանելու Հայկական Ընթերցատան բարեջան Գործադիր Ժողովին որ յօժարակամ ընդունեց առաջարկութիւնս իր հովանաւորութեանը տակ առնելու համար այս Բանախօսութիւնը : Իսկոյն գործի սկսաւ ան , ու անոր յաջողութիւնը ապահովելու համար ամէն հարկաւոր միջոց ի գործ դրաւ : Իմովսանն պիտի ջանամ ձեր այս ժամը օգտակար եւ ախորժելի կերպով անցնել տալու :

Տիկիննե՛ր եւ Պարոննե՛ր ,

Ինչպէս գիտէք , զարգացման պայմաններէն մէկն է ճամբորդութիւնը : Հին Յոյներու պատմութեան մէջ կը տեսնենք թէ օրէնսդիր ըլլալու համար , փիլիսոփայ տիտղոսը կրելու համար ճամբորդութիւնները անհրաժեշտ կը նկատուէին : Ուրիշ հին ազգերու մէջ ճամբորդութիւնները նուազ գեր մը

չէին կատարեր ականաւոր անձերու քով : Ամէնքս ալ գիտենք թէ մենք ե. դարը ունենալու համար մեր թարգմանիչ ու մատենագիր Հայերէն շատերը պարտաւորեցան Կ. Պոլիս, Աթէնք ու այլուր ճամբորդել : Հին ազգերու պատմութիւնը մեզի ցոյց կուտայ անվրէպ թէ ծաղկեալ քաղաքակրթութեան մը այն ազգերը միայն հասան որոնք, իրենց երկրին դիրքին բերումով կամ բաղդին մէկ քմայքովը, յարարութեան մէջ մտան իրենցմէ աւելի կամ նուազ հեռու գտնուող ուրիշ ազգերու հետ :

Աս իրողութիւնը շատ դիւրին է ըմբռնել : Միտքը տրամաբանելու համար երկու եզրի պէտք ունի : Գաղափար մը յաւիտեան նոյնը պիտի մնայ ցորչափ ուրիշ թեր կամ դէմ գաղափար մը չի գայ անոր հետ չի չփոփոխ : Կղզիացումէ սովորամուտութիւն եւ միօրինակութիւն առաջ կուգան ու ասոնք մահ կը պատճառեն : Ծամբորդութեան միջոցները շատցած ու դիւրացած են այսօր շնորհիւ ճարտարարուեստի առաջգիմութեան եւ ընկերութեան հարստութեան աճումին : Սակայն հակառակ ասոր, նոր նոր երկիրներ տեսնելու, նոր նոր մարդիկ ճանչնալու առանձնաշնորհումը կը մնայ անմատչելի բազմաթիւ համեստ քսակներու : Ուղեւորական տպաւորութեանց կամ ուսումնասիրութեանց վրայ հրատարակուած գիրքերը դոյզն ինչ օգնութեան կը հասնին այդ քսակներուն : Եւրոպայի դպրոցներուն մէջ մանաւանդ այդպիսի գրքերու ընթերցումը աշխարհագրութեան դասերու կարեւոր եւ լրացուցիչ մասը կը կազմէ : Մեր մէջ ուղեւորական գիրքերը դեռ ցանցառ են դժբաղդաբար, բայց Եգիպտոսի Հայերը մասնաւոր առա-

ւելութիւնով մը օժտուած են այս մասին, ու իցի՛ւ թէ գիտնային անկէ օգտուիլ. անընդհատ յարարարութեան մէջ են անոնք եւ յաճախ թեւ թեւի տուած կ'ապրին եւրոպական գաղութներու հետ, եւ ամէն ձմեռ շոգենաւը Ատլանտեանը շրջապատող երկու ցամաքներուն խտաշունչ երկիրներէն Եգիպտոսի տաքուկ եւ բազմադարեան յիշատակարաններով հարուստ ծոցին մէջ կը նետէ յաճախ մարդկութեան ընտրելագոյն մասը : Առաջգիմասէր Հայ մը կրնա՛յ անոնցմէ օգտուիլ, ոչ թէ կապիօրէն կեղծելով դանոնք, այլ իմաստուն ընտրութիւնով մը անոնց հետեւելով :

Կերպով մը ձեզ այս աշխատութեան մղելու համար է որ փափաքեցայ Զուիցերիոյ մէջ ըրած վեցամեայ ընակութեանս տպաւորութիւնները ձեզի հաղորդել այսօր : Եթէ այդ երկրին բազմակողմանի գեղեցկութիւնները ձեր առջեւ պարզելով՝ կրցայ գեղեցիկ եւ ընտիր բաներու համար ձեր ունեցած ճաշակին ու սէրին վրայ բան մ'աւելցնել, ձեզի նոր եռանդ մը ներշնչել լաւադոյն կեանքով մ'ապրելու, աշխատութեանս արդիւնքը վայելած պիտի համարիմ :

Ա .

Հին Հելլէտիան իր արդի Զուիցերիա անունը առած է Շուէց քանթոնէն որ զլիւսաւորն է Դաշնակցութիւնը հիմնող երեք քանթոններէն : Զուիցերիա չի գտնուիր Ամերիկայի մէջ, ինչպէս կը կարծէր Հայերու հին կրօնքը ուսումնասիրող ծանօթներէս մէկը, այլ կը գտնուի Եւրոպայի կեդրոնը իրեն

սահմանակից ունենալով չորս հզօր Պետութիւններ .
 Ֆրանսա , Գերմանիա , Աւստրիա եւ Իտալիա : Հոն
 երթալու համար Աղէքսանդրիայէն Մէտօբըրի չոգե-
 նաւ մը կը նստիք որ ձեզ հինգ օրէն Մարսիլիա կը
 տանի , ուրկէ շոգեկառքով 12 ժամէ առաջ կը հաս-
 նիք ժընէվ , Զուիցերիոյ ամենէն փայլուն քաղաքը ,
 անոր հարաւային-արեւմտեան սահմանին վրայ : Այս
 երկրին մակերեսն է գրեթէ 41400 քա . քլ . այսինքն
 Եգիպտոսէն գրեթէ քսանհեհինգ անգամ պղտիկ . սա-
 կայն անոր բնակիչներուն թիւը երեք միլիոնէն ա-
 ւելի է , այսինքն Եգիպտոսի բնակիչներուն գրեթէ
 կիսուն չափ :

Զուիցերիոյ աշխարհագրական դիրքը մեծ կարե-
 ւորութիւն մը կ'ընծայէ իրեն Միջին Եւրոպայի մէջ :
 Անկէ՛ է որ կը մեկնին՝ դարամէտ ճառագայթներու
 պէս՝ Ալպեան խոշոր շղթաները ու կ'երթան ծածկել
 իրենց ճիւղաւորումներով անագին տարածութիւն մը :
 Անկէ՛ է որ կ'իջնեն ջուրի մեծ հոսանքներ որոնք
 բարձր արտեւաններու ոտքէն ծնունդ առնելով եւ
 միանալով ուրիշ գետակներու հետ՝ կ'երթան թափել
 Եւրոպան չրջապատող զանազան ծովերու մէջ :

Լեռնագրօրէն Զուիցերիա կը բաժնուի երեք մա-
 սերու . Ալպեանները , Ժիւռան եւ լեռնադաշտը :
 Ալպեանները Զուիցերիոյ գրեթէ 3/5 մակերեսը կը
 ծածկեն եւ անոր գլխաւոր հրապօյրներէն մէկը կը
 կազմեն շնորհիւ իրենց յաւիտենական ձիւներուն ,
 որոնք կը տօկան 2800 մեթր բարձրութիւնէ սկսեալ .
 նաեւ շնորհիւ իրենց գիւղանկարներու պէսպիսու-
 թեան , իրենց լիճերուն ու վազուն ջրերուն : Բայց
 Ալպեանները գեղեցիկ ըլլալէ զատ օգտակա՛ր ալ են .

եւրոպական Թերակղզիին մէջտեղը զետեղուած՝ հիւ-
 նալի կերպով յօրինուած են թէ՛ մթնոլորտին լա-
 նաւութիւնը ընդունելու եւ թէ՛ իրենց մօտակա
 գաւառներուն ջուրը բաշխելու համար : Ալպեանները
 անցուղարձի հասարակ ճամբաներ դարձած են և
 Սէն կոթարի տակը՝ որ զուիցերական Ալպեաններ
 կեդրոնն է՝ բացուած է 1150 մեթր երկայնութիւն
 թիւնէլ մը որ աւելի կարճ ճամբայ մը կը հայթա-
 թէ Միջերկրականի երկիրներուն եւ Հնդկաստան
 վաճառքներուն դէպի Անգլիա քրահգիրթն համար :

Ժիւռան որ Ֆրանսան Զուիցերիայէն կը բաժն
 եւ որ անոր 1/10 մասը կը ծածկէ՝ համեմատաբա-
 միօրինակ է , թէպէտեւ ո՛չ հրապօյրէ զուրկ :

Զուիցերիոյ մնացած մասը կը կազմէ լեռնադա-
 տը որ Ալպեաններուն ու Ժիւռային միջեւ զետեղ-
 ուած է . անոր բարձրութիւնը ծովուն մակարդակէ
 5-600 մեթր է , այսինքն Հայաստանի լեռնադա-
 տէն երեք անգամ ցած :

Բ.

Զուիցերիոյ զետակները կը սնանին գլխաւորա-
 պէս անձրեւի ու հալած ձիւնի ջուրերով : Գետերու
 մեծագոյն մասը իրենց ջուրերը կ'ընդունին սառնա-
 րաններէն : Զուիցերիական Ալպեանները 600 տա-
 նարաններէ աւելի կը պարունակեն որոնք երկրի
 1/20 մակերեսը կը գրաւեն : Սառնարանները հետեւ
 եալ կերպով կը կազմուին . արեւի ջերմութեա
 ազդեցութեան տակ կը հալին բարձր գագաթներու

վրայ գտնուած ձիւներու մակերեւոյթային խաւերը ու գոյացած ջուրի կաթիլները տակը կ'անցնին . հոն կը սառին եւ կը կազմեն փոքրիկ սառէ գնտակներ որոնց ամբողջութեանը ո՛ՅՎՅ անունը կուտան : Երբ Անվիէի դաշտը հաղորդակցութեան մէջ գրուած ըլլայ դարձնտի ձորի մը հետ , Անվիէները հոն կ'իջնեն իրենց ծանրութեան ուժով ու նորէն կը հալին : Երբ այդ ջուրը դարձեալ սառի՝ առաջ կուգայ կապտագոյն խիտ սառոյց մը բազմաթիւ հերձատուներով . սառնային այս դաշտն է որ սառնարան կը կոչուի եւ ուրկէ հրապուրուած Եւրոպայի ամէն երկիրներէն զբօսաշրջիկներ կուգան այցելելու զայն , երբեմն իրենց կեանքն իսկ վտանգելով :

1901ի ամառը Վարժապետանոցի աշակերտներս վերելք մ'ըրինք Շամոնի որ Վերին Սալուայի մէջ 2500ի մօտ բնակիչներով հիանալի գիւղաքաղաք մըն է : Սառոյցի ծովին վրայ մեզի ցոյց տուին այն տեղերը որոնք անգլիացի զբօսաշրջիկներու գերեզմաններն եղած են : Այդ ծովի վրայէ մեր անցնելու միջոցին աչքերովս տեսայ զեռատի կին մը որ իր ուղեցոյցին աննկարագրելի ճիգերուն շնորհիւ հազիւ ձողպերեցաւ անկումէ մը որ կրնար իրեն կեանքին վերջ տալ : Ահա՛ գեղեցկութիւնները վայելելու համար կիրքի գործած հրաշքը , թէ անոնք արտայայտուին բնութեան ձոցը կամ մարդկային կերպարանքի վրայ , իմացական աշխարհին մէջ կամ բարոյական . կիրքը կը մոռնայ կեանքի արժէքը :

Զուիցերիա՝ Եւրոպայի ցամաքին կատարը զետեղուած՝ երկայն գետեր չի պարունակեր , բայց հո՛ն

կը գտնուին անոնց մէկ քանիներու տկերը ու վերին ընթացքները : Գետակները կ'անցնին զօրաւոր զառիթափներէ , մեծ արագութեամբ կը հոսին ո՛նաւարկելի չեն : Ճարտարագործութիւնը այս գետակներէն կ'օգտուի անոնց շարժիչ զօրութիւնը կիրարկելով : Բնութեան գեղեցկութեանց սիրահար հոգիները ցաւով կը տեսնեն այդ գետակներու վրայ շինուած հոս ելեկտրական գործատուն մը , քիչ մը վատաղօրիք մը , աւելի անդին թուղթի կամ շոքոլա գործարան մը :

Զուիցերիոյ լիճերը՝ որոնք իր շքեղ պաճուճանքը կը կազմեն 1300 քու . քուէ աւելի տեղ կը ծածկուան անոնց թիւը 200է պակաս չեն : Անոնցմէ ամենամեծին՝ Լէմանի կամ Ժընէվի լիճին տարածութիւնը (598 քու . քիւ .) մեր Վանի լիճէն 6 1/2 անգամ պզտիկ է : Անոնք բնութեան հրաշակերտներն են իրենց կապոյտ ու վճիտ ջուրերու գեղեցկութիւնով եւ մօնաւանդ անոնց եղերքներուն գեղանկար տեսքով Տորչափ Լողան մնացի , չ'անցուցի օր մը որ չ'եթայի Մոնպլոնի դարտափը հոգեպիչ նայելու զմայլելու համար Լէմանը ու անոր վրայ տիրող հըկայ , ալեւոր Ալպեանները : Ամենէն խոպան մար անգամ չ'եմ կարծեր որ անզգայ մնայ այս տեսարաներուն առջեւ :

Ընդհանուր առումով Զուիցերիա բարեխառն կլիմայ մ'ունի , սակայն տեղական կլիմայները բարձէ շատ կը տարբերին իրենց բարձրութեան կղերքին համեմատ : Կլիմայի մեծ տարբերութիւն կ'Ալպեաններու հիւսիսային կողերուն եւ հարաւայ

կողերուն միջեւ . ասպէս զատ միեւնոյն բարձրու-
թեամբ աւելի ցուրտ է ժիւռայի մէջ քան Ալպեան-
ներուն : Լեռնադաշտին միջին բարեխառնութիւնը
8-9 աստիճաններէն վեր չ'ելլեր : Կլիմայի ցրտու-
թիւնը սակայն Զուիցերիային չ'արգիլեր բնակիչ
բարձրութեանց մէջ : Զուիցերիոյ մէջ կը գտնուի
ժիւֆ անուն գիւղը (Կրիզոնի քանթոնին մէջ) որ
2135 մէթր բարձրութեան վրայ զետեղուած է ու
Ներոպայի մէջ միակ սեղն է որ այդչափ բարձրու-
թեան վրայ մշտատեւ բնակութիւն հաստատուած ըլ-
լայ : Լեռնային մաքուր օդը թոքախտաւորներու
պատասպարանն է , հիւանդութիւն մը որ Ներոպայի
մէջ մեծ աւերներ կը գործէ :

Գ.

Զուիցերիա խիստ հարուստ է բուսաբերութիւ-
նով . դաշտավայրներն ու բլուրները ծածկուած են
այգիներով , լեռնային մասերը արմտիքներու արտե-
րով ու մարդագետիններով , իսկ Ալպեանները՝ պա-
րարտ արօտավայրներով ու անտառներով : Այսու ա-
մենայնիւ բնիկ երկրագործական արտադրութիւնը
ժողովրդեան պէտքին չի բաւեր , եւ ստիպուած է
արմտիք ներածել Գերմանիայէ , Ռուսիայէ ու Ամե-
րիկայէ : Ներոպայի մէջ ո՛չ մէկ տեղ այգին այնչափ
խնամով կը պատրաստուի որչափ Լէմանի , Նէօշա-
թէլի եւ Տիւրիխի լճերուն եզերքները , եւ չ'եմ գիտեր
թէ Ակոռիի գիւնին այս տեղերու գիւնիէն աւելի ա-
խորժելի ու աւելի առողջարար է : Միայն գիւնիի
տարեկան արտադրութեան արժէքն է 45 միլիոն ֆր . :

Գետնախնձորներու տարեկան հունձըրը աւելի՛
բարձր գումար մը կը ներկայացնէ : Պողատու ծա-
ռերը շահաւէտ մշակութեան առարկայ են : Մեղուա-
բուծութիւնը տարուէ տարի կը յոռաջանայ : Նոյն-
պէս չերամարուծութիւնը մեծ քայլեր կ'աննէ երկ-
րին հարուստին-արեւելեան մասերուն մէջ :

Պաճարաբուծութիւնը երկրագործ ժողովուրդին
հասոյթներուն գլխաւորն է : Անկէ կը հանէ պանիր ,
խտացած կաթ զոր կրնաք դտնել Գահիրէի մեծ նը-
պարավաճառներուն քով , մորթ , կարագ , միս ,
եւլն :

Հիմայ այլ եւս օրսորդութեամբ ապրող մարդ
դժուար է գտնել հոն , սակայն ձկնորսութեամբ ապ-
րող դեռ շատ մարդիկ կան :

Զուիցերիոյ հանքային արտադրութիւնը շատ
տկար է . քանի մը տեղեր կը գտնուին աղային հան-
քեր , աոֆալթի , շինութեան քարերու , մարմա-
րիոնի եւ հերձաքարի (ardoise) հանքեր , սակայն
ճարտարագործութեան երկու գլխաւոր սնունդները՝
հանքածուխն ու երկաթը՝ կը պակսին :

Երկրայործական եւ հանքային արտադրութեան
անբաւականութիւնը Զուիցերիա կ'ստիպէ օտարէն
դնել իր ճարտարագործութեան հարկաւոր առաջին
նիւթերը : Երբ այս աննպաստ հանքամանքին վրայ
աւելցնենք իր նաւահանգիստ չունենալը , եւ այն
յիւսար զոր կը պատճառեն օտար երկիրներ մացնելու
ատեն ապրանքներու վրայ դրուած ծանր սակերը ,
կրնանք հասկնալ թէ Զուիցերիացի ճարտարագործ-
ներն ու վաճառականները ի՛նչ տեսակ կորով եւ հը-

նար ի գործ դրին իրենց երկրին ապահովելու համար այն պատուաւոր տեղը զոր կը գրաւէ փոխանակութեանց ընդհանուր շարժումին մէջ : Անոնք ազուտ քաղեցին իրենց երկրին դրամագլուխի առատութենէն, գործաւորաց թոշակներու գնին համեմատաբար նուազ բարձրութենէն եւ գետակներու շառիթափ ջուրերէն զանոնք իբր շարժիչ ուժ գործածելով, ինչպէս ըսի :

Պալի, Յիւրիխի, Սէն Կալի մետաքսեղէնները, լեռնաքարեղէնները եւ գունաւոր ու սպառնոյ բամպակեղէնները կը մրցին Եւրոպայի նմանօրինակ արտադրութեանց հետ : Սէն Կալ եւ Արքնցէլ ասեղնալործութեան համար առաջին տեղը կը գրաւեն բոլոր աշխարհի մէջ : Զուիցերիոյ ժամագործութեան գործարանները ամէնուն ծանօթ են . միայն, արեւմտեան Զուիցերիոյ մէջ 43000 գործաւորներ կը զբաղեցնեն անոնք : Գոհարագործութիւնն ու երաժշտական տուփերու շինութիւնը նմանապէս նշանաւոր են : Թուղթի, ապակիի, անօթի եւլն, շինութիւնները երկրորդական ճարտարագործութեան կարգը կը դասուին :

Պ. Փոնսէն Զուիցերիոյ համար հետեւեալ վկայութիւնը կուտայ . «Տնտեսական հրաշալիք մըն է որ «առանց ծովեզրի, գրեթէ բոլորովին ծածկուած անբեր լեռներով ու երեք միլիոնէ նուազ բնակչութիւնով երկիր մը կարենայ օտարին հետ մեկուկէս երկիլիոնէ աւելի առուտուր ընել :

«Զուիցերիա կենդանի օրինակ մըն է այն ստեղծիչ ուժին զոր կ'ստանան՝ վաճառականութեան ու

«ճարտարագործութեան մէջ՝ ազատ փոխանակութեանն ու աշխատութիւնը, ներքին քաղաքականութեան մէջ՝ ազատութիւնն ու ուսումը, արտաքին քաղաքականութեան մէջ՝ բացակայութիւնը «գլխուորականութեան, որ անողորմապէս կը ծանրաւնայ բոլոր մեծ պետութեանց վրայ : »

Դ.

Պատմական ժամանակէն շատ առաջ այս օրուան Զուիցերիան կազմող երկիրը արդէն բնակիչներ ունէր որոնք քարայրներու կամ լճային կայաններու մէջ կը բնակէին . ասոնք կեղտական ցեղի Հելվետներու լուծին տակ ինկան որոնք՝ իրենց կարգին ետեւէ ետեւ՝ Հռովմայեցիներուն ու գերման ժողովուրդներու լուծը կրեցին : Յետոյ յաջորդաբար այս երկիրն եկան հաստատուեցան Ալմանները, Ֆրանքներն ու Պուրկոնները : Ը. եւ Թ. դարերէն սկսեալ Հելվետիան արեւմտեան Եւրոպայի մեծ պետութեանց մասը կազմեց : Կայսերական իշխանութիւնը այնտեղ կը ներկայացնէր սէնսէօն մը որ յաճախ ժողովուրդը կը կեղեքէր : Ճիշդ ինչպէս պատմութեան նոյն շրջանին մէջ՝ արաբ սատիկաններ Խալիֆային կողմէն Հայաստան կուգային վերին հսկողութիւն կատարելու ու մեղ յաճախ կը հարստահարէին :

Իւրիի, Շվիցի եւ Սթանսի դիւղացիները օգտուելով իրենց լեռներու պաշտպանողական առաւելութիւններէն, ժ.Պ. դարուն վերջերը կազմեցին մշտապէս նիզակակցութիւն մը եւ կնքեցին դաշինք

ը որ զուեցերիական Դաշնակցութեան հիմը կազմեց: Գերդական երեք հանրապետութիւններու շատ ամեատ նիզակակցութիւն մ'եղաւ աս, կազմուած զաղաքներու ո' եւ է միջամտութենէ դուրս: Մինչեւ ուրիշ ամէն տեղ ժողովուրդը սէնեէտներու պատակած էր, կեդրոնական Զուեցերիոյ այս հոլաններու բնակիչները իրենց Ատենակալները իրե'նք ընարէին ու հասարակութեան վերաբերեալ ամէն որձ իրե'նք կը անօրինէին:

Նախնական երեք քանթոնները կրցան իրենց ղապտութիւնը պաշտպանել յաջող պատերազմներու էջ - քիչ քիչ դաշնակիցներու թիւը շատցաւ եւ յաշտպանողական ոյժը զօրացաւ մինչեւ վերանորոտութիւնը (Réforme, ժ.Ձ. դար) որ Զուեցերիան դըրդեցուց մինչեւ որ քաթալիկ եւ բողոքական երու դաւանութիւնները որոշ դաւաններու մէջ զատուեցան, ու երկիրը նորէն խաղաղեցաւ:

ԺԲ. Էգարու վերջը Զուեցերիա ֆրանսական Յեւափոխութեան հակահարուածը կրեց: 1798ին Direc-torieի բանակներէ պաշարուած ստիպուեցաւ մէկ կտուութիւն կազմել: 1815ին Վիէննայի Համաժողովը՝ որ կազմուեցաւ Յեղափոխութեան ու Նաբոլէոնի որձած տակնուվրայութիւնները դարմանելու՝ Զուեցերիոյ գոյութիւնը կարեւոր յայտարարեց Եւրոպայի լիսաւոր Պետութիւնները իրարմէ կղզիացնելու համար, անոր լաւ սահմաններ տուաւ ու զայն չէզոք կտուութիւն հռչակեց:

Ե.

Այս Համաժողովէն ի վեր որ քանթոններու թիւը 22ի հասցուց՝ Զուեցերիա հողային փոփոխութիւն չի կրեց, բայց իր ներքին կազմակերպութիւնը քանի մը անգամներ բարեփոխեց. դաշնակցական վերջին Սահմանադրութիւնը՝ որ այսօր Զուեցերիա կը վարէ՝ 1874ի ստացած ձեւն է: Անոր հեղինակները զայն խմբագրելու ատեն աչքի առջեւ ունեցած են Մնահանգաց Սահմանադրութիւնը ու անկէ մեծապէս օգտուած են: Այս Սահմանադրութեան ուժով Զուեցերիա կը կազմէ դաշնակցական հանրապետութիւն մը: Դաշնակցական իշխանութիւններն են. Դաշնակցական ժողովը, դաշնակցական Խորհուրդը եւ դաշնակցական Դատաւարանը:

Դաշնակցութեան բարձրագոյն հեղինակութիւնն է դաշնակցական ժողովը. ան կը բաղկանայ ազգ. Խորհուրդէն որուն անդամները ուղղակի ժողովուրդէն կ'ընտրուին երեք տարուան համար, 20, 000 բընակիչը մէկ երեսփոխանի համեմատութեամբ, եւ Պետութեանց Խորհուրդէ մը որ կազմուած է 44 երեսփոխաններէ, այսինքն ամէն մէկ քանթոնէ երկու երեսփոխան, ընտրուած ժողովուրդէն կամ քանթոններու Մեծ Խորհուրդներէն: Երկու Խորհուրդները զատ զատ կը խորհրդակցին եւ օրէնքները այն ատեն միայն գործադրելի են երբ երկուքն ալ միեւնոյն բնագիրը ընդունին: Երկու Խորհուրդները կը գումարուին ու կը կանգնեն դաշնակցական ժողովը ընտրելու համար դաշնակցական Խորհուրդը, դաշ-

նակցական Դատարանը, դաշնակցութեան Քարտուղարը եւ բանակին Զօրապետը:

Դաշնակցական Խորհուրդը գործադիր իշխանութիւնն է. կը բաղկանայ 7 անդամներէ որոնք Յ տարուան համար կ'ընտրուին դաշնակցական Ժողովէն: Անոր նախագահը՝ որ Ժողովէն կ'ընտրուի միայն մէկ տարուան համար եւ որ իսկոյն վերընտրելի չ'է՝ Դաշնակցութեան նախագահ տիտղոսը կը կրէ: Դաշնակցական Ժողովը եւ դաշնակցական Խորհուրդը կը գումարուին Պէտնի մէջ որ 1848էն ասդին դաշնակցական քաղաք եղած է:

Դաշնակցական Դատարանը որ 16 անդամներէ եւ Յ փոխանորդներէ կը բաղկանայ կը գումարուի Լոզանի մէջ. ան կը տեսնէ քաղաքային գատեր Դաշնակցութեան եւ քանթոններու միջեւ, Դաշնակցութեան եւ անհատներու միջեւ, քանթոններու միջեւ: Այս Դատարանին է որ մինչեւ վերջերս երբեմն զիմում կ'ընէին օտար Պետութիւններ իբրեւ իրաւարարի:

2.

Դաշնակցութեան նպատակն է հայրենիքին անկախութիւնը ապահովել օտարին դէմ, ներսը պահպանել հանդարտութիւնն ու բարեկարգութիւնը, դաշնակցեալներու ազատութիւնն ու իրաւունքները պաշտպանել ու անոնց հասարակաց բարգաւաճութիւնն աւելցնել: Արտաքին գործերը անոր յանձնուած են. նիդակակցելու, դաշնադրութիւններ կընքելու, պատերազմ ու խաղաղութիւն յայտարարե-

լու իրաւունքը անո՛ր վերապահուած են: Մաքսատան, բոստի եւ հեռագրի վարչութիւնները անկէ կախում ունին: Միայն ա՛ն կրնայ դրամ կոխել, չափերու ու կշիռներու դրութիւնը որոշել: Զինուորական ծառայութիւնն ալ դաշնակցական իրաւասութեան մէջ է: Ան է որ կը հսկէ քանթոնական օրէնքներու վրայ որոնք պարտին երաշխաւորել քաղաքացիներու իրաւունքներն ու ազատութիւնը, այսինքն օրէնքի առջեւ հաւասարութիւն, խիղճի ու հաւատալիքի ազատութիւն, մամուլի ազատութիւն եւն:

Դաշնադրութեանց համեմատ Զուսցերիա չի կըրնար նախայարձակ ըլլալ պատերազմի մը մէջ, բայց ստիպուած է կռուիլ անոնց դէմ որ իր չէզոքութիւնը կը բռնաբարեն: Այդպիսի պատահականութեանց պատրաստ գտնուելու համար ստիպուած է իր զինուորական ուժն ունենալ: Մնայուն բանակ չ'ունի ան, բայց կռուի ժամանակ ամէն քաղաքացի զինըւոր է: Ամէն քսան տարեկանը լրացնող երիտասարդ կ'երթայ առաջին տարին մէկ ու կէս ամիս զինուորական կրթութիւն ընելու, անկէ տուենք կը դառնայ համազգեստով, հրացանով ու պայուսակովը: Երկրորդ տարին այդ կրթութիւնը քանի մ'օր միայն կը տեսէ. ու այսպէս շարունակաբար ամէն անգամ սր պատկանեալ իշխանութիւններէն հրաման մ'ստանայ: Զուիցերիացին բուսական զարգացած է քաղաքացիական գիտութեան մէջ, կ'զգայ իր վայելած առանձնաշնորհումը ու յօժարութեամբ մարտական համազգեստը կ'անակը կ'անցնէ: Երբ Զուիցերիա ձախորդութեանց բերումով լեռնադաշտի կռիւը թողու,

կրնա՛յ լեռներուն մէջ ապաստանիլ ու հոն կռիւր շա-
րունակել : Հելուետական զինուորները արդէն շատ
նշանաւոր եղած են մանաւանդ Միջին դարու մէջ որ
ատեն իրենց ծառայութիւնը մեծաքանակ դրամով
վարձու կու տային : Մինչեւ այսօր պապի թիկնապահ-
ները Չուիցերիացիներ են :

Չուիցերիոյ ամէն մէկ քանթոնը պզտիկ Պետու-
թիւն մըն է ու վեհապետ է ցորչափ այդ վեհապե-
տութիւնը չ'է սահմանափակուած դաշնակցութենէն :
Ամէն մէկը իր Սահմանադրութիւնն ունի ու ինքնօ-
րէն կը կառավարուի : Կեդրոնացման ու ապտկեղրո-
նացման դրութիւնները հո՛ս ալ իրենց կուսակից-
ներն ու հակամարտներն ունին : Վերջերս ձեռնար-
կուեցաւ քաղաքային Օրինադիրքը միացնել ամէն
քանթոններու համար , ինչպէս նոյն բանը տեղի ու-
նեցաւ , ասկէ քանի մը տարի առաջ , Գերմանիոյ
կայսրութեան մէջ : Քանթոններու այս ինքնուրոյն
գործունէութիւնները երկրին ոյժը ո՛չ միայն չ'են
տկարացներ , այլ եւ անոր առաջդիմութեան մղում
կուտան , իւրաքանչիւր քանթոն ուղեւիով գերազան-
ցել իր դաշնակիցը :

Վօի քանթոնը հետեւեալ կերպով կազմակեր-
պուած է . ու միւս քանթոնները անկէ շատ չ'են
տարբերիր : Օրէնսդիր իշխանութեան համար ունի
Մեծ-Խորհուրդը որուն երեսփոխանները ուղղակի ժո-
ղովուրդէն կ'ընտրուին 4 տարուան համար . Գործա-
դիր իշխանութեան համար՝ Պետական Խորհուրդ մը
որ կը բաղկանայ 7 անդամներէ եւ 4 տարուան հա-

մար կ'ընտրուի Մեծ Խորհուրդէն : Դատական իշխա-
նութեան համար ունի քանթոնային Դատարան մը
որ 9 անդամներէ կը բաղկանայ եւ որ 4 տարուան
համար կ'ընտրուի Մեծ Խորհուրդէն : Ամէն մէկ տիւս-
դրիկ (district) որ քանթոնին կազմական ստորաբա-
ժանումն է՝ ունի դատարան մը որ կը բաղկանայ 5
անդամներէ եւ որոնք 4 տարուան համար կ'ընտրուին
քանթոնային Դատարանէն : Ամէն մէկ շրջանակի մէջ
կայ նաեւ իրաւաբար Ատեան մը որուն անդամները
նոյնպէս քանթոնային Դատարանէն կ'ընտրուին :
Այս ատեանին ստորգելիքն է կանխաւ քննել ամէն
դատ որ պիտի ներկայանայ դատարաններու , կը ջա-
նայ ոսոխներն իրարու հետ հաշտեցնել : Ա՛ն է որ
կ'ընդունի կտակները , անչափահասներու հօլը կ'ըս-
տանձնէ ու կը բաժնէ ժառանգութիւնները : Կերպով
մը մեր Գահիրէի Առաջնորդարանին զերը կը կատա-
րէ ան : Ունի նաեւ սլատժական շատ սահմանափակ
իրաւասութիւններ :

է .

Ազգայնութեան տեսակէտով Չուիցերիա միու-
թիւն մը չի կազմեր : 100 բնակիչներու վրայ 71ը
գերմաներէն կը խօսին , 22ը Ֆրանսերէն , 5ը իտա-
լերէն եւ 2ը ռումանչ կոչուած լատին բարբառը : Լե-
զուի այս տարբերութիւնը՝ որ միանգամայն ցեղի
տարբերութիւն է՝ Չուիցերիացիներուն մէջ բաժան-
ման կամ ատելութեան պատճառ մը չ'է , ինչպէս է
Սւրոպայի ուրիշ երկիրներու մէջ : Թէեւ անոնցմէ
ամէն մէկը իր յատուկ գաւառն ունի եւ սակայն

կա՛ն սահմանակից տեղեր ուր բազմութեամբ եւ ուրիշ տեղեր քիչ մը նուազ քանակութեամբ իրարու հետ կ'ապրին ու շատ սիրով կ'ապրին : Անոնք բաւական զարգացած են ըմբռնելու համար թէ իրարու հետ կապուած են բազմադիմի շահերով ու իրենց սիրած հայրենիքին ու պաշտած ազատութեան փրկութիւնը իրենց համերաշխ գործունէութեան մէջ կը կայանայ :

Ինչպէս շատ մը բաներու մէջ Զուիցերիացին իր երկու մէծ գրացիներուն՝ Ֆրանսայի եւ Գերմանիոյ ազգեցութիւնը կը կրէ, նոյնպէս իր նկարագիրը խառնուրդ մըն է մէկուն զուարթութեան եւ միւսին լրջութեան : Ռոմանական Զուիցերիոյ բնակիչները՝ որոնց հետ վեց տարիներէ աւելի ապրեցայ՝ գտայ շատ աշխատասէր եւ մանաւանդ հիւրասէր : Եթէ օտարասէր չ'են, օտարատեսց բնաւ չ'են անոնք : Այդ փոքրիկ երկիրը՝ իր տարածութեան համեմատութեամբ՝ շատ աւելի օտարականներ կը պարունակէ քան Եւրոպայի ուրիշ ու եւ իցէ երկիր : Փոխանակ օտարը ասելու, Զուիցերիացին կը մրցի անոր հետ ու կը ջանայ զանի գերազանցել :

Ը.

Զուիցերիոյ մէջ ինչ որ զիտ ամենէն աւելի շահագրգռեց, եւ ինչ որ կարելի եղածին չափ մօտէն ջանացի ուսումնասիրել՝ ան իր կրթական վիճակն է : Իրեն անհունապէս պատուաբեր է սոյն վիճակը որ թերեւս Եւրոպայի ուրիշ ամէն երկիրներէ աւելի

փայլուն է : Այսօր Զուիցերիոյ մէջ կարգաւ քրել չի գիտցող մարդ հազուադիւտ է, մանաւանդ նոր սերունդին մէջ :

Նախնական կրթութիւնը պարտաւորիչ է ամէն մանչ ու աղջիկ տղու համար մինչեւ 12, 13 կամ 14 տարեկան, քանթոնին համեմատ : Դպրոցական կազմակերպութիւնն ու ծրագրերները շատ չ'են տարբեր իր մեր կեդր. Ուսումնական Խորհուրդի 1893ի խըմբագրած կազմական կանոնագրէն եւ 1897ի կրթական ծրագրէն . միայն սա տարբերութիւնը կայ որ անոնցիները կէտ առ կէտ կը գործադրուին, մինչդեռ մերինները կէտ առ կէտ կը քննադատուին, մանաւանդ այն մասերը որ քիչ մը ժամանակի զոհողութիւն կը պահանջեն ուսուցիչէն, ինչպէս դասարանական գրութեամբ ամէն մէկ դասարանի համար մէյմէկ մնայուն պատիարակներ ունենալու մանկավարժական ընտիր կանոնը . եւ կամ այն մասերը որ անոր ապիկարութեանը կը բաղխին, ինչպէս ձեռական աշխատութեանց, գծագրութեան, երաժշտութեան եւ մարմնամարզի նման կարեւոր ճիւղեր :

Ամենէն յետին գիւղի վարժարանը այնչափ շքեղ ու նպատակայարմար է որչափ գլխաւոր քաղաքինը, մանաւանդ թէ անոր ուսուցիչը այնչափ զարգացած է որչափ կեդրոնինը . վասնզի ուսուցչական վկայական ստանալու համար քննութեանց մէկ ծրագիր միայն կայ . դուք կրնաք հետեւցնել բարիքը որ կը ծնի գիւղացիներու համար իրենց զարգացած ուսուցիչներ ունենալու առաւելութենէն : Նախնական ուսումը աւարտող պատանին չի պատ-

րաստուիր մասնաւոր զբաղումի մը . բայց իր ուժե-
րը տրամադրելի եղած են ձեռնարկելու համար ամէն
համեստ աշխատութիւն :

Դիտելու արժանի են մասնաւորապէս ձեռակաւ
աշխատութեանց եւ գծագրութեանց ցուցադրութիւն-
ները որոնք տարին քանի մ'անգամ պարբերաբար
կը հանդիպին , եւ աշակերտներէն շատերուն քով
գտնուած հաւաքոյթները բազմապիսի ծաղիկներու ,
հանքային արտադրութիւններու , պատկերազարդ
քարտերու եւ գրոշմաթուղթերու : Հաճելի ու կրթիչ
ժամանց մըն է զբաղիլը այս հաւաքոյթներով ո-
րոնցմէ հրապուրուած՝ ե'ս ալ սկսայ կազմել : Բնա-
կանաբար ուսուցիչն է որ աշակերտին կը ներշնչէ
անոնց սէրը ու անոնցմով զբաղելու գաղափարը կու-
տայ , վասնզի գիտէ ան թէ ամէն տեղէ աւելի դաս-
տիարակութեա'ն մէջ պէտք է կիրարկել այն ընտիր
կանոնը որ կը կայանայ կանխարգել միջոցները
արգելիչ միջոցներէն նախապատիւ համարելու
մէջ :

Ձի մոռնամ ըսել թէ ուսումնական ամէն կարգի
հաստատութիւնները կը վերաբերին Պետութեան ,
հասարակապետութեան (commune) կամ անհատներու :
Նախնական կրթութեան մատակարարութիւնը աւե-
լի հասարակապետութիւնն է ստանձնած :

Միջնակարգ կամ երկրորդական վարժարանները
նուազ ծաղկած վիճակ մը չ'ունին : Աս դպրոցները
կը յաճախեն ընականաբար անոնք՝ որ նախնական
վկայական ունին : Անոնք աշակերտները կա'մ ուղ-
ղակի ասպարէզի մը կը պատրաստեն եւ կա'մ Հա-

մալարաններուն կարենալ հեռեւելու : Մարդկային
ամէն գործունէութիւն ընդհանրապէս իր նախապատ-
րաստական դպրոցն ունի այն տեղ : Մնողքը իր զա-
ւակին հետ համերաշխաբար կ'ընտրէ անոր ասպարէ-
զը եւ ըստ այնմ աղջիկը կամ տղան պատկանած
դպրոցը կը յաճախէ : Բնականաբար մեծ մասով բա-
րեկեցիկ դասն է որ պիտի կրնայ օգտուիլ այս դըպ-
րոցներէն , ո'չ թէ անոր համար որ դպրոցական թո-
շակները անմատչելի են ամէն քսակներու , այլ
վասն զի աղքատ տղաք ուրիշ գործերու պարապելով
կրնան իրենց հացին ստակը շահիլ :

Երկրորդական դպրոցներուն մէջ հարկ է առաջին
տեղը տալ վարժապետանոցներուն որոնց թիւը ակ-
մը Զուիցերիոյ մէջ 39ի կը բարձրանայ . ասոնք եր-
բեմն առանձին հաստատութիւններ են , երբեմն ալ
gymnaseներու մէջ առանձին դասընթացներ աշա-
կերտ-ուսուցիչներու համար : Ասիկայ միջոց մըն է
անչուշտ խնայողաբար հարկաւոր արդիւնքը ստանա-
լու :

Շատ տեղերու մէջ կան երկրագործական վար-
ժարաններ որոնք կարեւոր ծառայութիւն մը կը մա-
տուցանեն երկրին : Լոզանի սոյն հաստատութիւնը
բաց է միայն ձմեռը վից ամիսի չափ , ամառը աշա-
կերտները իրենց տեղերը կը դառնան . դպրոցին շըր-
ջանն է երկու տարի : Նեօշաթէլի մէջ աշակերտները
ձմեռը աւելի տեսական երկրագործութիւն կը սոր-
վին , իսկ ամառը աւելի գործնական , դաշտերու
մէջ հողի եւ պաճարի հետ : Աշակերտն այս դպրոց-
ներու մէջ , կը սորվի բուն հողագործութիւն , անաս-

նարուծութիւն, երբեմն այգեպանութիւն, պարտիզպանութիւն, մեղուարուծութիւն, եւն: Աս հաստատութիւնները դիւրամատչելի են երկրագործ դասակարգին թէ՛ մուտքի քննութեան եւ թէ՛ թռչակի տեսակէտներով:

Ռոմանական Զուլիցերիոյ ամէն քանթոն ունի իր վաճառականութեան զպրոցը որ շատ հռչակաւոր է եւ ուր բազմաթիւ օտարականներ կը յաճախեն իրենց ուսումն ընելու: Այս զպրոցներու դոյութիւնը մէկն է անչույտ այն պայմաններէն որոնցմով Զուլիցերիա Եւրոպայի առաջնակարգ վաճառականական ազգերու հետ յաջողութիւնով կը մրցի:

Զուլիցերիա կը պարունակէ շատ մը արհեստանոցներ որոնցմէ ոմանք բարեգործական հաստատութիւններ են, վիճակուած անտէր տղաքը արհեստով մ'օժտելու, ոմանք ալ տեսական եւ գործնական արհեստագիտութեամբ ծիւրիխի դաշնակցական Բազմարուեստանոցին կամ ուրիշ հաստատութեանց համար կը պատրաստեն, եւ կամ աւելի բանաւոր կըթութիւն մը կ'աւանդեն սոյն զպրոցներէն յետոյ ուղղակի արհեստով զբաղողներուն համար:

Մասնաւոր համակրութիւնով մը պիտի յիշատակեմ Ժընէվի ճարտարական Գեղարուեստներու վարժարանը (Ecole des Arts Industriels) որ Փարիզի 1900 տարւոյ Յուցահանդէսին մեծ մրցանակը ընդունած է Ժիլոլիին շնորհաւորութիւններով: Անոր նպատակն է աշակերտը պատրաստել հետեւեալ ճարտարագործութեանց.

1. Շէնքի զարդական քանդակագործութիւն,
2. կաղապարում եւ վերյարդարում գածի,
3. քանդակագործութիւն քարի եւ մարմարիոնի վրայ,
4. քանդակագործութիւն փայտի վրայ,
5. գեղարուեստական ոսկեգործութիւն,
6. պղնձաքանդակ,
7. գեղարուեստական կուռ երկտթ,
8. փայտագրութիւն,
9. նուրբ կաւագործութիւն եւ զարդական նկարչութիւն,
10. նկարչութիւն կիտուածի վրայ:

Աչքի առջեւ ունենալով մեր ցեղին մասնաւոր ընդունակութիւնը ճարտարագործութեանց, փափաքելի էր որ մանչ կամ աղջիկ զաւակի տէր ծնողքները գիտնային օգուտ քաղել այս Հաստատութեանէն: Այս ճիւղերէն ոմանք կրնան շահաւոր կերպով ի գործ դրուիլ Եգիպտոսի մէջ, Մուտքի պայմանները անմատչելի չ'են բնաւ (1):

Դեռ կան ուրիշ բազմաթիւ առաջնակարգ վարժարաններ արհեստներու եւ գեղարուեստներու համար, ինչպէս Ժընէվի Ժամագործութեան վարժարանը եւ Երաժշտանոցը որոնք թուելը երկար պիտի ըլլար:

Բարձրագոյն ուսումը կ'աւանդուի Համալսարաններու մէջ: Ես չ'եմ ճանչնար երկրագունտին վրայ երկիր մը որ իր բնակիչներուն ու տարածութեանը համեմատ պարունակէ այնչափ Համալսարաններ որ-

(1) Յօժարակամ տեղեկութիւններ պիտի հաղորդեմ կամ հայթայթեմ այս Հաստատութեան վրայ ինչպէս ուրիշ կէտերու վրայ ամէն անոնց որոնք ինծի կը դիմեն:

Թ .

չափ Զուեիցերիա : Ան ունի վեց նշանաւոր Համալսարաններ եւ նէօլաթէլի Ակադեմիան անոնց կարգը անցնելու համար միայն բժշկական facultéն կը պակսի : Գիտէք թէ Համալսարան մը պարտի պարունակել հետեւեալ հինգ ֆաքըլթէները . Աստուածաբանութեան , Դպրութեանց , Իրաւագիտութեան , բնական Գիտութեանց եւ Բժշկութեան : Յաճախ Համալսարաններու կցուած է Երկրաչափութեան վարժարանը : Համալսարաններու մէջ վերջերս մասնաւոր ջիպրոմներ հաստատուեցան Ընկերական գիտութեանց համար եւ Փարիզի մէջ լրագրական ասպարէզի պատրաստողներու համար յատուկ դասընթացքներ :

Թէեւ ամէն ազգէ ուսանողներ եւ ուսանողուհիներ կը յաճախեն այս համալսարանները, եւ սակայն անոնց մեծ մասը Պուլկարիան կը ղրկէ : Զուեիցերիա որչա՛փ յարմար եւ գեղեցիկ երկիր մըն է անոնց համար՝ մանչկամ աղջիկ՝ որոնք եւրոպական խնամեալ կրթութիւն մը կ'ուզեն ստանալ :

Դպրոցներու գլուխը փակելէ առաջ մեծ հաճոյքով պիտի արձանագրեմ մեր հայրենակիցներէն Պ. Մարտիրոս Նալբանդեանի Լոզանի մէջ բացած Արեւելեան Կրթարանը : Պ. Նալբանդեան Պէրպէրեանի նախկին սիրուած սաներէն եւ ուսուցիչներէն մէկն է : Ինք լոկ անձնական ճիգերով յաջողած է Գիտութեանց տոքթորի վկայական ստանալ եւ Լոզանի գիտութեանց ֆաքըլթէին մասնաւոր բրոֆ. անուանուել : Իր հաստատութիւնը արժանի է ամէն ծնողքի վստահութեան :

Զուեիցերիոյ բնակիչներուն 59 առ հարիւր բողոքական են եւ 40 առ հարիւրէն քիչ մ'աւելին կաթոլիկ : Կան քանթոններ՝ ինչպէս Պէնն, Պալ, Վո (գլ. քղք. Լոզան) որոնք բողոքական են մինչդեռ ուրիշներ ինչպէս Յրիպուրկ, Լիւսեոն եւն.՝ կաթոլիկ են. կան քանթոններ ալ ինչպէս Ժընէվ՝ ուր երկու դաւանութիւնները խառն են : Կաթոլիկ բազմաթիւ եկեղեցական շրջանակներ հողմէական եկեղեցիէն բաժնուած եւ հաստատած են Ազգային կաթոլիկ եկեղեցի մը որուն գլուխն է եպիսկոպոս մը :

Բողոքականները գլխաւորապէս երկու եկեղեցիի կը բաժնուին : Զուեիցերիական Ազգային եկեղեցի եւ անկախ Աւետարանական եկեղեցի : Աս բաժանումը առաջ եկած է Պետութեան եւ եկեղեցիին միջեւ ծագած իրաւասութեան անհամաձայնութեան պատճառով : Հրէաները 8000է աւելի են :

Ասողջմէն զատ կան քրիստոնեայ բազմաթիւ աղանդներ , ինչպէս տարպեան, առաքելական, փրկարար, շարթապահ եւն. , եւն. որոնք ազատորէն կը գործեն : Սահանադրութեան համեմատ ամէն մարդ ազատ է իր ուզած կերպով հասկնալ եւ կիրարկել կրօնքը , բաւական է որ հանրային անդորրութիւնը վրդովելու բնութիւնը չ'ունենայ ան : Զուեիցերական պատմութեան մէջ կարելի է գտնել ինչպէս ուրիշ երկիրներու մէջ , իրարու դէմ զէնքով կռուելու հասնող ատելութիւններ , սակայն այսօր ժողո-

վորդը բաւական զարգացած է ըմբռնելու համար
 թէ անարդար եւ դձուձ է հալածել մարդը իր համո-
 ղումներուն կամ գաղափարներուն համար : Կեղծը ու
 սուտը ատելի' է արդարեւ, բայց ո՛չ կրօնական ան-
 կեղծ հաւատքը, ի՛նչ ձեւի տակ ալ ներկայանայ ան :
 Ատկէ զատ մէկ հայրենիքի ու մէկ շահու գաղափար-
 ները անոնց մաքին մէջ շատ լայն տեղ մը գրաւած
 են . ու դաւանական սնոտի վէճերով զբաղելու հա-
 մար ա՛լ տեղ չ'է մնացած հոն :

Ժ .

Բարեգործութիւնն ու բարեգործական հաստա-
 տութիւնները յետին տեղ մը չ'են գրաւեր Զուիցե-
 բիոյ մէջ . Փարիզի 1900ի Յուցահանդէսին մէջ տե-
 սայ ատոր յատկացուած բաժինը որ Անգլիոյ բաժ-
 նին չափ փայլուն էր : Տղան դեռ չի ծնած՝ մօրը ար-
 զանդին մէջ՝ կ'սկսի ընկերութեան շնորհներն վայե-
 լել . մօրը համար կառուցուած են Մայրութիւն ա-
 նուն հաստատութիւններ ուր ամէն հարկաւոր խը-
 նամք կը տարուի նորածնին ու անոր մօրը համար .
 անկէ յետոյ կան յատուկ ընկերութիւններ կամ հա-
 սարակապետային հաստատութիւններ որ տղուն խը-
 նամք կը տանին մինչեւ դպրոցական հասակը ու ա-
 ւելի անդին : Շատ մը դպրոցներու մէջ կան դպրո-
 ցական խոհանոցներ ուր չքաւոր տղաքը ցերեկները
 ձրիապէս կրնան սնանիլ :

Կան ընկերութիւններ որ ամառնային արձա-
 կուրդին տղքատ ու ախեղծ տղաքներու գաղթակա-

նութիւն մը կը տանին ամառանոցներ , քսնի մը
 շարաթ՝ քաղաքէն հեռու՝ մաքուր օդ եւ ընտիր սը-
 նունդ ճարելու համար այդ հէգ անժառանգներուն :
 Մարդ ճշմարիտ բերկրանքով կը դիտէ անոնց դարձը
 ուրախ զուարթ ընթարմացած ու կարմրորակ դէմ-
 քերով :

Ամէն քանթոնի մէջ գոնէ մէկ երկու որբանոց-
 ներ կան բարերարներու շնորհիւ հաստատուած : Նէօ-
 շաթէլի մօտ Տոմպրէտոն գիւղին մէջ կայ երկսեռ
 որբանոց մը Պորէլ անուն որ բարերարն է սոյն հաս-
 տատութեան : Կնոր յարգելի Տնօրէնը զիս հաւաստեց
 թէ Պարոն Պորէլ իր հարստութիւնը յատկացուցած է
 այդ հաստատութեան պարզապէս չի դիմանալով տես-
 նել իր հայրենակից տղոց փողոցներու մէջ թափա-
 ուիլը՝ անոք ու անպատասպար : Անցեալ տարի այս
 հաստատութեան մէջ 125 տղաք կային Յէն մինչեւ
 18 տարեկան . ասոնցմէ ոմանք (14) հոգի արդէն ար-
 հեստ մը կը սորվին հաստատութենէն դուրս , իսկ
 միւսները կ'ուսանէին հաստատութեան մէջ կամ գիւ-
 ղին հասարակապետային վարժարանը :

Ճիշդ անցեալ տարի նոյն քանթոնին մէջ գըտ-
 նուած բաղմամբիւ աղջիկներու յատկացուած որբա-
 նոց մը (Պայետո) հուրի ճարակ եղաւ . անկիջ սպէս ա-
 մէն տեղ հանգանակութիւններ բացին ու չէնքը վե-
 րըսին կառուցուեցաւ առաջինէն աւելի հոյակապ :

Կոյրերու համար կան պատասպարաններ ուր այդ
 խեղճերը ուսում կ'առնեն ու յարմար արհեստներ կը
 սորվին (Կողովագործութիւն , օղահիւսութիւն (tricot-
 tage) եւն . : Աս պատասպարեալներէն ճանչցայ մէկը որ

յաջողապէս դաշնակ կը գարնէր, ուրիշ մը որ գեղեցիկ բանաստեղծութիւններ գրած էր: Մարդ ո՛րչափ գոհ կ'ըլլայ տեսնելով որ այս խեղճերն ալ որոնք կը տառապին առանց յանցանք մը գործած ըլլալու՝ կեանքի ճշմարիտ հաճոյքներուն կը մասնակցին:

Ամէն ջանք ի գործ կը դրուի գործ չ'ունեցող մարդոց կամ կիներու գործ հայթայթելու. եւ սակայն խնդիրը դժուար ըլլալէ զատ շատ փափուկ է: Անհատական կամ հասարակապետային Տեղաւորման գրասենեակներ կան որոնք միջնորդներ են աշխատողին ու աշխատցնողին միջեւ: Դրամական նպաստ գրեթէ չի տրուիր անոնց որոնք կրնան աշխատիլ: Այսպիսիները ատաղձարաններու կամ գրասենեակներու մէջ կ'աշխատցուին փոքրիկ թոշակներով:

Գրեթէ հարկ չըկայ ըսելու թէ հիւանդներու համար կան ձրի բժշկական Ընդուլարաններ (Dispensaire) կան հիւանդանոցներ, ծերանոցներ, յիմարանոցներ, եւն.:

ԺԱ.

Անհամար ընկերութիւններ կազմուած են այլ եւ այլ ազնիւ նպատակներով: Ընկերութիւններու կազմակերպութիւնը ընդհանրապէս հետեւեալ կերպով է. անոնք որ ընկերութեան մը նպատակը կը սիրեն՝ մէկ տեղ կը հաւաքուին եւ իրենց մէջէն կ'ընտրեն գործունեայ ու կարող 3, 5 կամ 7 անդամներ կազմելու համար Գումբթէն կամ Գործադիր Ժողովը, եւ կը յօժարին վճարել ամսական կամ տարեկան բաժնեգին-

ներ: Գումբթէն ամէն տարի Ընկերութեան կը ներկայացնէ Տեղեկագիր մը որուն կցուած է նաեւ անոր ելիւմտական վիճակը:

Գրիստոնէական միութիւնները՝ որոնք տարածուած են ամերիկէն հեռաւոր դիւղակներն անգամ՝ փըրկարար դեր մը կը կատարեն երիտասարդութեան մէջ: Անոնք որ շատ հաւատ չ'են ընծայեր կրօնի արդիւնագործութեան կազմած են անկախ բարոյականի զարգացման ընկերութիւններ. եւ եռանդով կ'աշխատին իրենց նպատակը իրագործել: Սակայն բազմալի է որ ասոնց թիւը աւելի շատնայ:

Գիտէք թէ ալքոլը սարսափելի կոտորած կ'ընէ եւրոպական երկիրներէն շատերուն մէջ. Ձուիցերիա անոնցմէ մէկն է զժբազգաբար: Իշխանութիւնները, եկեղեցականութիւնը, դիտնականները, մարդասէրները մէկ եղած մոլեգին կռիւ մը կը մղեն անոր զոհերուն թիւը պակսեցնելու համար: Իրենց գործունէութեան միջոցներն են բանախօսութիւն, դպրոց, մամուլ, անձնական օրինակ: Կրնաք դիւրաւ համոզուիլ թէ երբ այսչափ ճիգեր միանան՝ անկարելի է արդիւնք չ'ստանալ:

Նոյն կռիւը կը մղեն անբարոյականութեան դէմ, սակայն աւելի զգուշաւոր միջոցներով:

Ընկերութիւններէ ոմանք ձմեռ երկոյնները դիւրամատչելի պայմաններով զաւրեթացքներ հաստատած են չափահասներու համար: Ասոնց նպատակն է արհեստական, դեղարուեստական կամ վաճառականական զարգացումի նպատակել: Անոնցմէ ոմանք իրենց մէջ ունին իննայոզական Սնտուկներ, անդամները խնայողութեան վարժեցնելու եւ կամ խնայողու-

Թեան արդիւնքով վաստակի նոր հնարք մը գտնելու համար . ուրիշներ՝ իրենց անգամներուն անգործ օրերուն կամ հիւանդութեան եւ ծերութեան ժամանակ օգնելու համար :

Կոն ընկերութիւններ որոնց նպատակն է բանտէն արձակուած ողորմելիները տեղաւորել, ինչ որ շատ դժուար է, վասն զի ամէն մարդ անոնց չի վստահիր : Կոն ուրիշներ ալ որոնք յիմարանոցէն ելլողներուն կը ջանան գործ հայթայթել երկայնամիտ եւ բարեսէր անձերու մօտ :

Զուիցերիացիները Անգլիացիներուն պէս ազէկ ըմբռնած են թէ ամէն բանէ առաջ պէտք ունին իրենց Ֆիզիքական ոյժին, իրենց առողջութեանը, ու ընկերութիւններու շարքը նորէն կ'սկսի . ֆուտ-պոլի, պիսիկիդի, մարմնամարզի ընկերութիւններ, Ալպինական ընկ. (Ալպիաններու մէջ վերելքներ կատարելու համար), լուղորդներու ընկ. եւն. :

Ընկերութիւն մը իրենց քաղաքին կամ գիւղին զարգացմանը համար, ուրիշ մը անոր արեւելեան կամ արեւմտեան կողմը շէնցնելու համար, ուրիշ մըն ալ հանրային պարտէզ մը ճոխացնելու համար :

Կիներու ցոյց տուած եռանդը ո՛չ մէկ տեղ կայ : Անոնք կազմած են ընկերութիւններ ստատրելու համար իրենց սեռի երիտասարդութեան բարոյական զարգացման . կամ անոնց պատիւը պաշտպանելու համար լիախ էրիկ մարդոց դէմ . ուրիշներ անտէր աղջիկները տեղաւորելու համար, ուրիշներ քիչ գրամով լաւ ճաշ մը պատրաստելու միջոցներ ցոյց տալու համար . զարձեալ ուրիշներ եպերելու համար այն

կիները որոնք հաճոյք կ'ուզեն գտնել չքնաղ թուշուններու մահով առաջ եկած փետուրներով գլխ սրկ կրելու մէջ :

Եթէ վայրկեան մը զուիցերիացի կիները Եգիպտոսի մեր իգական սեռի ակումբներուն մէջ սպրէին, սոսկումով պիտի տեսնէին հայ կիներ (ո՛չ ամէնքը բարեբաղդաբար) որ՝ սիկարէթը բերանը՝ թուզթով բաղդ կը նայի եւ իր մայրենի լեզուն թողած, Թուրքին կամ Արսբին լեզուն կը խօսի :

Կը տեսնէք թէ, Տիկիներ եւ Պարսիներ, այս ժողովուրդը ամէն բան իր կատալարութենէն կամ հասարակապետութենէն չ'սպասեր, թէ ընկերութիւնները իրարու ոյժ ակարացնելու չ'են ճգնիր : Համանման ընկերութիւնները կամ մէկ մէկու հետ կը գործակցին եւ կամ պարկեշտօրէն կը մրցին, ինչ որ կը պատահի մանաւանդ Ֆիզիքական խաղերու եւ բերանացի կամ գործիւոր երոժշտական ընկերութեանց միջեւ :

ԺԲ.

Ինչպէս աշխարհի ամէն կողմը, նոյնպէս Զուիցերիոյ մէջ հայկական կոտորածները կարեկցական զգացումներ ծնուցին : Զուիցերիոյ ցոյց տուած կարեկցութիւնը սակայն աւելի արդիւնաւոր եւ աւելի երկարատեւ եղաւ :

Հիմայ ձեռքիս տակ կը պակսին թիւեր հոս նըշանակելու համար անկէ Հայաստան դրիւած օգնութեանց գումարը, սակայն քաջ գիտեմ թէ Ֆրանսայի

զրկած օգնութեանէն տասնապատիկ աւելի էր, հակառակ իր բնակիչներուն սակաւութեանը: Անոնք իսկոյն ամէն տեղ բացած են հանդանակութիւններ որոնց մասնակցած են ամէն հասակէ ու զասակարգէ մարդիկ. վարժարաններու մէջ աշակերտները 6-7 տարեկանէն սկսեալ, Համալսարաններու մէջ բրոֆէսորներն ու ուսանողները, զօրանոցներու մէջ — եթէ կարելի է զօրանոց անուանել մէկ երկու ամսուան համար մարզարան մը — զօրանոցներու մէջ զինուորները, եկեղեցիներու մէջ հաւատացեալները, եւ ընդ ո՛չ ոք ձեռնպահ մնացած է:

Հայկական ասեղնագործութիւնները շատ լաւ ընդունելութիւն գտած են Զուիցերիոյ հրապարակին վրայ:

Մինչև և հիմայ քանի մը Որբանոցներ կը պահեն Սեբաստիա, Կիւրին, Պարտիզակ և Պրուսա: Ասիկայ ըրին ու կ'ընեն ո՛չ թէ դաւանափոխական պախարակելի գիտումով, ինչպէս Հայր Շարմբթան, այլ Պարզապէս մարդասիրական զգացումէ մղուած:

Տեղն է հոս յիշատակելու թէ Զուիցերիացիները հակառակ իրենց զանուած աննպաստ պայմանին, ուզեցին քաղաքական միջամտութիւն մըն ալ ընել մեզի համար: Հանրագրութիւններ պատրաստեցին ներկայացնելու համար Դաշնակցական Սորձուրդին որպէս զի Մեծ Պետութեանց քով բարեխօսէ հայկական դատին ի նպաստ իրտկան միջամտութիւն մ'ընել տալու համար Բ. Դրան մօտ: «Մենք գիտենք որ՝ կ'ըսէր ինձի բարեկամս՝ Զուիցերիա իբրև չէզոք Պետութիւն մը ձայն չ'ունէր եւրոպական քաղաքա-

կանութեան մէջ, բայց մենք տախկայ ըրինք անոր համար որ Մեծ Պետութեանց ժողովուրդները մեզմէ օրինակ առնելով իրենց կառավարութեանց մօտ գործեն ի նպաստ ձեր դատին:»

Ռոմանական Զուիցերիոյ ամենէն կարեւոր թերթը՝ Կադէր քը Լոզան՝ օր մը չի մերժեց իմ ու ինձմէ շատ աւելի կարեւոր Հայերու և հայասէրներու գըրութիւնները հրատարակել ի նպաստ մեր դատին: Նուպար փաշայի մահուան առիթով՝ քանի մը առաջնորդող յօդուածներու մէջ՝ ընդարձակ տեղեկութիւններ գրեց ան մեր հռչակաւոր քաղաքագէտին կեանքին միջոցով ու գրուածաց անոր գործը: Անցեալները Պրիւսէլի հայասիրական Համաժողովին առիթով ամենէն սրտագրաւ յօդուածները հրատարակեց, ու սյուպէս ամէն անգամ՝ որ պատեհութիւն կ'ունենայ: Զուիցերիոյ ամբողջ մամուլը մեզի հետ ունինք:

Կեռ այս վսեմ ժողովուրդին համակրութիւնը կը վայելենք. ան չ'է դադրած մեզի վերաբերեալ ամէն ինչի բներով շահագրգռուելէ և յուսով սպասելէ մեր ապագայ աղտոագրութեան:

ՃԳ.

Ինչպէս տեսանք՝ Զուիցերիոյ մէջ շատ բազմութիւ ևն օտարակտնները որոնք են Գերմանացի, Ֆրանսացի, Իտալացի, Հրէայ, Անգլիացի եւն., սակայն Հայերը սակաւաթիւ են: Ընտանիքով Հայեր հազուադիւս են. անոնցմէ մէկը կը ճանչնամ Նէօշաթէլի քանթոնին մէջ, որբեւայրի Տիգրանակերտ-

դի կին մը որուն երեք զուսակները՝ Իրաւագիտութեան ուսանող, վաճառականի շրջուն պաշտօնեայւն փոքրաքանակ վաճառական՝ հետզհետէ նշանուեալ, կարգուելու վրայ են, բնականաբար տեղացիներուն հետ, եւ բնականաբար անոնց հետ ընկուղիւղու լինակուած: Պալի, Յիւրիխի եւ ժընէվի մէջ քանի իր հայ ընտանիքներ կը գտնուին՝ ինչպէս զիս հաւաստեցին: Առանց ընտանիքի Հայերն ալ բազմաթիւ չ'են. կենք հազարոք, վաճառական, գրագիր, ուսուցիչ, բժիշկ, եւլն են: Այս ցանցառութիւնը թերեւ ճասամբ բացատրուի կեանքի կռուին չափազանց սխառ ըլլալովը եւ հայկական մթնոլորտի մը չգոյութիւնովը: Գտնուած Հայերը ընդհանրապէս երկրորդական վարժարանի կամ Համալսարանի ուսանողներն որոնք շատ պատուաւոր կերպով կ'ուսանին եւ ինչնց տեղերը կը գտնան: Ուսանող եւ ուսանողուհի Հայերուն նախամեծարած Համալսարանը ժընէվինն է: Են կը գտնուի՝ ինչպէս գիտէք՝ Դոյշակի խըմազբատունը որուն պետերէն մէկուն հետ օր մը խօսակցելու պատիւն ունեցայ: Ռուսահայ լուրջ երիտասարդ մըն էր ան. թէեւ անոր բոլոր գաղափարներուն համակարծիք չ'էի, սակայն լաւ տպաւորութեան տակ անկէ բաժնուեցայ:

ԺԴ.

Հիմայ թոյլ առէ՛ք ինծի, կ'աղաչեմ, Տիկիններ եւ Պարոններ, որ վայրկեան մը եզրիպտոսի Հաներն բազդատութեան դնեմ Զուիցերիացիներուն

հետ: Դիտեմ թէ երկու եզրերուն միջեւ տարբերութիւնը մեծ է, տարբերութիւններ զօրս չ'ենք կըրնար բռնալ. եզրիպտոսի երկիրը՝ պիտի ըսեն չատեւրը՝ մերինը չ'է. եզրիպտոսը Զուիցերիոյ չափ հրապոյրներ չ'ունի եւ թէ մենք շատերս առժամեայ հիւրեր ենք այս տեղ:

Ես կ'ընդունիմ թէ այս պատճառները սելի կամ նուազ արգարտնալի են, այսու ամենայնիւ մենք շատ բաներ կ'ընայինք ընել այդ պայմաններուն մէջ իսկ, ինչպէս եւրոպական դադութիւնները կ'ընեն: Կ'աղաչեմ, ըսէ՛ք ինծի, ո՞վ կ'արգիլէ մեզ մեր մայրենի լեզուն խօսելէ: Անգլիա ո՛չ Գերմանիա կը կոչուի բոլորներէնը արգիլելու համար իր Պետութեան մէջ եւ ո՛չ Ռուսիա՝ ջնջելու համար հայ լեզուն ու հայ գրորոցները: Եթէ հոյութեան այդ թանկագին աւանդը՝ մեր լեզուն՝ մէկ կողմ կը նետենք թուրքին լեզուն խօսելու, ո՞վ է ցանցաւորը (1): Պիտի չի վարանիմ ցայտարարելու թէ ելիպտոսի մէջ մեր հայկական գողորիկ լեզուին կրտձ այս նախասինքը սրախ վերայ ամենէն խօսք վերքը բացած է: Լեզուի պահպանութիւնը Հայերու համար ազգութեան պահպանութիւն կը նշանակէ, մանաւանդ մ'եր հայրենիքէն հետու ապրողներու համար: Լեզուի տեսակէտով մենք Զուիցերիացիներէն բոլորովին տարբեր կացութեան մը մէջ կը գտնուինք:

(1) Կը փութամ աւելցնել թէ խօսքս չ'է անոնց համար որոնք եզրիպտոսի մէջ ճնամ ըլլալով եւ կամ ու եւ զօրաւոր պատճառով չ'են կրցած սորվիլ հարէնը, այլ անոնց՝ որոնք այդ լեզուն գիտեն եւ չ'են խոսիլ, եւ կամ կրնան սորվիլ ու չ'են ուղեր:

Եգիպտոսի հայու թեան կրթական վիճակը շատ ողբալի է . ունինք տարրական նախակրթարան մը որուն հազիւ միջին դասընթացքը աւարտած՝ աղաքը կանականին կը դարձնեն դպրոցին, ինչպէս զիս կը հաւատատէր Գալստեան վարժարանի Պատ. Հոգաբարձութեան անդամներէն մէկը : Կանոնաւոր տարրական կրթութիւն մ'իսկ եւ շատ քիչ կը գտնեմ Եգիպտահայուն համար եւ ո՛չ թէ անոր միայն միջին դասընթացքը : Երկրորդական վարժարան մ'ունենալու էինք Եգիպտոսի մէջ . անիկա պիտի փրկէր մեր պատիւը այս երկրին մէջ, եւ պիտի արգարացնէր ուսումնասէր ըլլալու համբաւը զոր Հայերս կը վայելենք Եւրոպայի մէջ : Ռ՛ւր տեղ կ'առնեն իրենց ուսումը մեր բարեկեցիկ ազգայիններու զաւակները, եթէ երկրորդական ուսում աւանդել կուտան անոնց : Պատասխանը դիւրին է . — Օտար դպրոցներու մէջ, օտար ազգեցութեանց տակ : Օտարաանոց չ'եմ, Տիկիներ եւ Պարոններ, եւ սակայն զիս չը պիտի կրնաք համոզել թէ անոնք կրնան մեզի տալ բնիկ ազգային գաստիարակութիւն մը, ինչ որ էական է մեզի համար : Զուիցերիացիները եթէ մեր պայմաններուն մէջ գտնուէին շատոնցուրնէ գոհացուցած պիտի ըլլային իրենց այս պէտքը : Գահիրէի մէջ 4-500 Զուիցերիացիներու համար անոնք ունին արդէն երէց մը որուն յանձնած են իրենց զաւակներուն ազգային գաստիարակութիւնը : Եգիպտահայուն կրթական վիճակը՝ շատ բարդ եւ շատ կարեւոր խնդիր մը՝ կը յուսամ առանձին կերպով ուսումնասիրել :

Եգիպտոսի մէջ սակաւաթիւ չ'են այն Հայերը

որոնք աշխատութիւն չ'ունին իրենց հացը ճարելու համար, աղքատ չ'են անոնք որ մուրան եւ ո՛չ հիւանդ՝ որ հիւանդանոց երթան : Ունինք կարող քոմիթէ մը անոնցմով զբաղելու համար ատիկայ սակայն կարեւոր պէտք մըն է . անոր գոյութիւնը մեծ բարիք մը պիտի ըլլար բողմաթիւ սիրելի Հայերու համար :

Ըսին ինձի, չ'եմ կրնաք անոր ստուգութիւնը երաշխաւորել . թէ բազմաթիւ Հայեր գերի եղած են այբջլամութեան եւ անբարոյականութեան : Ասոնց զոհերը պարտաւելի ըլլալէ աւելի արգահ սակի են ուրիշ կերպով կարելի չ'է տեսնել անխամ թողուած եւ ճշմարիտ հաճոյքներու գիտակցութենէ զուրկ երիտասարդութիւն մը : Ո՛վ զթուփեան ձեռք պիտի կարկառէ այս չուսո՞րարածներուն :

Եգիպտոս հասնող Հայերը յանկարծ կը գտնուին նոր կլիմայի մը պահանջներուն հանդէպ . փորձով կը ծանոթանան խել մը հիւանդութիւններու հետ . որոնց անուան անգամ լսած չ'էին . ու իրենց չեանքը վրայ կուտան երբեմն շատ պարզ կանոններու անպատեան պատճառով : Անոսած տարի հայ զազթ սկանութեան մէջ 103 ծնունդի փոխարէն 106 մահ պատահած է : Այս արդիւնքը ճշմարտապէս սարսափելի է : Ո՛վ պիտի սորվեցնէ անոնց կեանքի պահպանման հարկաւոր առողջապահական ճշմարտութիւնները եւ գիպական միջավայրին մէջ : Ասիկայ ընելիք աշխատութիւն մըն է ո՛չ նուազ կարեւոր : Խոստովանինք թէ թաշտներու մահով զբաղող Զուիցերիացիները մինչեւ հիմայ զբաղած պիտի ըլլային իրենց հայրե-

նակիցներուն կեանքով. եթէ մեր տեղն ըլլային:


Ինչ բանի մէջ կը կայանայ երկրպագութիւնն հայրենասիրութիւնը. — Ըստ իս զնելու մէջ հայկական գոյթականութիւնը եւրոպոսիան գաղթականութիւններէն բարձր վիճակի մը մէջ: Ահա իտէալը որուն նա պարտի ձգտիլ: Աս ընելու համար ուրիշ բանի պէտք չ'ունինք եթէ ոչ կ'ամբի. զօրեղ կամքի: Աս ընելով մեր հայրենիքին ամենամեծ ծառայութիւն մատուցած պիտի ըլլանք. ու աս չ'ընելով մեր դասը պիտի տկարացնենք: Այս բանը կարելի է հաստատել ամէն ազատ երկիր ազրոզ հայութեան համար. այլ մանաւանդ եւրոպական գաղթականութեան համար որ աւելի հոծ է. եւ որ կը գտնուի մեր ճակատագիրը ձեռքերուն մէջ ունեցող Պետութեանց բողոքութիւն ներկայացուցիչներուն աչքին առջեւ: Մինք մեր առաջգիմութիւնովը պէտք է ցոյց տանք թէ գիտենք օգտուել մեր կեանքին ու ինչքին ապահովութենէն. մեր ազատութենէն զորս մեզի կը պարզեւեն ազատամիտ եւ արդարասէր Պետութեան մը օրէնքները:

Առաջ ուրեմն. Զուիցերիացիի՝ պէս ապրինք. Հայո՛ւ պէս ապրինք:

ՎԵՐՁ

Կոթարկութիւն

<u>Էջ</u>	<u>Գող</u>	<u>Պիտու</u>	<u>Ուղիղ</u>
6	3	Հայրենի	Հայրենի էջ
11	13	Էջ	Էջ
13	24	Յան Կոթարկութիւն	Յան Կոթարկութիւն
17	28	Ինչ ինչ էջ	Ինչ ինչ էջ
23	1	Ինչ է	Ինչ է
29	17	մարտի էջ	մարտի էջ
30	4	մարտի է	մարտի է
31	5	ընթացք մարտի	ընթացք մարտի
38	28	Բարձր խնդիր	Բարձր խնդիր
36	29	Էջ քոթարկութիւն	Էջ քոթարկութիւն
38	5	Էջ քոթարկութիւն	Էջ քոթարկութիւն
38	7	Էջ	Էջ



У. 2.

№ 3400